

244/8

Թիւ 24279
Փետր. 27, 1974

Դերաշնորհ

Տ. Բարգէն նպս. Վարժապետեան
Հովիւ Ս. Աստուածածին
Հայաստանեայց Եկեղեցւոյ
Նախազա՞ն ծիական Խորհուրդի
Ուաշինկուլըն.

Սիրելի Բարգէն Սրբազն,

Ստացած ենք Փետրուար 20, 1974 թուակիր Ձեր անդեկազիրը, որով
կը հաղորդէք թէ Ձեր նախազա՞նութեամբ Յունուար 27ին գումարուած հա-
մայնքի ծիական ժողովին մէջ կատարուած է ծիական Խորհուրդի հինգ ան-
դամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը
ինպղիբը ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծիական ժողովը աեղի ունեցած է Թեմա-
կան Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ծիական Խորհուրդի նորընտեսի անդամները, ըստ առորեւ արուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ներփակուած Առաջնորդարա-
նի ապագրեալ հաշուեկշիռ, ծիական ժողովի առենազգրութիւնը, ծիական
Խորհուրդի նորընտեսի Դիւանի անդամոց եւ Եկեղեցւոյդ ենթակայ մարմին-
ներու վարչութեանց առենազեաներու անունը, հասցէն եւ հեռածայնի թի-
ւը:

Օրհնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ
Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան աարի մը,
ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքին
մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Աւիլեզմ Տիւչէսսի
Տորթ. Սրբուհի Էսէֆեան
Արմեն Կարապետեան
Ճերի Հերիմեան
Օր. Էնն Գալուրեան